ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Քրդերը էթնիկական առումով դասականորեն բաժանված ժողովուրդ են, ուստի հաճախ նրանց անվանում են մասնատված ժողովուրդ, ժողովուրդ առանց երկրի և առանց պետականության[1]: Անգլիացի դիվանագետ լորդ Քերզոնը գրել է, որ քրդերի պատմությունը հիմնովին մութ է, որ «այն ժողովուրդ է առանց գրականության և համարյա առանց պատմության»:

Քրդերը ցրված են Մերձավոր ու Միջին Արևելքի հսկայական տարածքներում, բայց համախմբված ձևով հիմնականում բնակվում են Թուրքիայում, Իրանում, Իրաքում և Սիրիայում: Քրդեր են ապրում Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի նորանկախ հանրապետություններում և Ռուսաստանի Դաշնությունում: Քրդական սփյուռք գոյություն ունի Արևմտյան Եվրոպայի երկրներում (ավելի քան 1 միլիոն), ԱՄՆ-ում, Ավստրալիայում և այլուր: Աշխարհում քրդերի թվաքանակի վերաբերյալ ստույգ տվյալներ գոյություն չունեն: Որոշ քուրդ հեղինակներ նրանց թիվը հասցնում են մինչև 50 միլիոնի: Սակայն ավելի հավանական է համարվում 30-35 միլիոնը, ընդ որում՝ Թուրքիայում՝ 15 միլիոն (Թուրքիայի ողջ բնակչության 20 տոկոսը), Իրանում՝ 8 միլիոն (11 տոկոսը), Իրաքում՝ 6 միլիոն (20 տոկոսը) և Սիրիայում՝ 2 միլիոն (10 տոկոսը)[2]:

Մերձավոր և Միջին Արևելքում իրենց թվաքանակով քրդերը չորրորդ ժողովուրդն են արաբներից, պարսիկներից և թուրքերից հետո: Ներկայումս աշխարհում նման թվաքանակով որևէ ժողովուրդ գոյություն չունի, որ պետականություն չունենա: Քրդական քաղաքական կուսակցությունները, ինչպես նաև ազգայնական շրջանները հավակնում են քրդական պետություն ստեղծել այսպես կոչված «Էթնիկ Քրդստանի» շրջանակներում, որը ներառում է Թուրքիայի արևելյան շրջանները, Իրանական և Իրաքյան Քրդստանը, ինչպես նաև Սիրիայի հյուսիսային քրդաբնակ շրջանները[3]:

Թեև «Քրդստան» տերմինը ներկայումս գրականության մեջ գրավել է հաստատուն տեղ, սակայն, ինչպես հայտնի է, աշխարհի ոչ մի աշխար-

---

[1] Տե՛ս, օրինակ, **Michael Eppel**. A People without a State. The Kurds from the Rise of Islam to the down of Nationalism. Austin: University of Texas Press, 2016:

[2] Տե՛ս **Michael M. Gunter**. The Kurds: A Modern History, Princeton, New Jersey, 2016, էջ XIV-XV:

[3] Տե՛ս **Graham E. Fuller, Ian O. Lesser**. Turkey's new geopolitics: from the Balkans to Western China, Colorado, 1993, էջ 62:

հագրական քարտեզի վրա նման անունով երկիր գոյություն չունի: Հետևվարար, «Քրդստան» հասկացությունը ունի զուտ պայմանական իմաստ: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմն այդ հասկացությունն ընդգրկող տարածքը մտնում էր Օսմանյան կայսրության և Ղաջարական Իրանի կազմի մեջ: Աշխարհամարտի ավարտից հետո, երբ տեղի ունեցավ Մերձավոր Արևելքի քաղաքական քարտեզի վերաձևում, «էթնիկ Քրդստանը» մտավ չորս պետության՝ Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Սիրիայի կազմի մեջ: Նշված ժամանակներից սկսած՝ գրականության մեջ կարելի է հանդիպել «Թուրքական Քրդստան» (կամ «Հյուսիսային Քրդստան»), «Իրանական Քրդստան» (կամ «Արևելյան Քրդստան»), «Իրաքյան Քրդստան» (կամ «Հարավային Քրդստան») և «Սիրիական Քրդստան» (կամ «Արևմտյան Քրդստան») պայմանական անվանումներին:

Քրդական աշխարհը միանշանակ չէ: Այն աչքի է ընկնում բազմազանությամբ և հակադրություններով, ընդ որում՝ առաջին հայացքից դժվար բացատրելի: Դա մի խայտաբղետ խճանկար է. քոչվորներ, կիսաքոչվորներ և նստակյացներ, ցեղեր ու ցեղային համադաշնություններ, ցեղային գոտիներ, լեզվական ու կրոնական բազմազանություն, աշխարհագրական ու քաղաքական տրոհվածություն և այլն:

Մինչև XX դարը քրդերի մոտ մթագնված էր ազգային միասնության ու ընդհանրության, միասնական հայրենիքի գիտակցությունը: Ցեղային կառուցվածքի պատճառով նրանց մեջ բացակայել է նաև հավաքական անկախության գաղափարը, և վերջնական իդեալ է եղել ֆեոդալական բնույթի ցեղապետական անկախությունը: Հենց այդ պատճառով պատմական զարգացման ընթացքում քուրդ ժողովրդին ոչ մի անգամ չի հաջողվել ստեղծել սեփական պետականություն:

Միջազգային ատյաններում առաջին անգամ քրդական հարցը քննարկման նյութ է դարձել 1919 թ. Փարիզի խաղաղության վեհաժողովում[4]: Սակայն միջազգային իրավական պրակտիկայում այդ հարցը պայմանագրի տեսքով առաջին անգամ ձևակերպվել է 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրում, որը քրդերի համար երաշխավորում էր ինքնավարության իրավունք Թուրքիայի կազմում: Մեկ տարուց հետո այդ ինքնավար կազմավորումը Ազգերի լիգայի համաձայնությամբ կարող էր վերածվել անկախ պետության: ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի գծած քարտեզով նախատեսվում էր Քրդստան ստեղծել Արևմտյան Հայաստանի տարածքում[5], որն ինքնին տարօրինակ ու անհասկանալի էր հայ ժողովրդի համար: Իր այդ ծրագրով Վուդրո Վիլսոնը փորձում էր լուծում տալ հայ-քրդական տարածքային վեճին՝ միաժամանակ ձգտելով բավարարություն տալ երկու կողմերի՝ պետականություն ունենալու ձգտումներին: Անկասկած, Միացյալ Նահանգների նախագահի ցան-

[4] Տե՛ս **General Sherif Pasha**. Memorandum on the Claims of the Kurd People, Paris, 1919:

[5] Տե՛ս «Treaty of Peace with Turkey, Signed at Sɒvres, August 10, 1920. The Frontier between Armenia and Turkey. As decided by President Woodrow Wilson», November 22, London, 1920:

կությունն է եղել այդ ճանապարհով հարթել հայ-քրդական առճակատումը և այդ երկու ժողովուրդներին վերածել խաղաղ հարևանների։

Սակայն ինչպես հայտնի է, 1923 թ. կնքված Լոզանի պայմանագիրը չեղյալ հայտարարեց Սևրի դաշնագիրը՝ դրանով իսկ քրդական հարցը մղելով անորոշության գիրկը։

Երկրորդ աշխարհամարտի եզրափակիչ փուլում քրդական հարցը կրկին բարձրացավ քաղաքական իրողությունների մակերես այս անգամ Խորհրդային Միության առաջնորդ Իոսիֆ Ստալինի կողմից։ Վերջինս պատերազմի ավարտից անմիջապես հետո միաժամանակ բարձրացրեց մի շարք հարցեր, որոնք միտված էին փոխելու Մերձավոր ու Միջին Արևելքում ուժերի հարաբերակցությունը հօգուտ Խորհրդային Միության։ Այդ հարցերի թվին էին պատկանում Իրանական Ադրբեջանի խնդիրը, սևծովյան նեղուցների, հայկական, քրդական հարցերը և այլն։ 1946 թ. հունվարի 22-ին Իրանի հյուսիս-արևմուտքում Մոսկվայի անմիջական նախաձեռնությամբ ստեղծվեց քրդական պետական մի կազմավորում, որը ստացավ «Քրդական ժողովրդական հանրապետություն» կամ «Մեհաբադի հանրապետություն» անվանումը[6]։ Ստալինը ծրագրել էր այդ նորաստեղծ պետությունը աստիճանաբար ընդարձակել Իրանի և Իրաքի քրդական բնակչություն ունեցող հողերի հաշվին, ինչպես նաև քրդերի միջոցով շարքից հանել Մերձավոր Արևելքի նավթահորերն ու նավթավերամշակման գործարանները, Արևմուտքի երկրների միջերկրածովյան նավատորմին վառելիք մատակարարելը ձախողելու նպատակով։ Մոսկվայում համարում էին նաև, որ «քրդերը սուր դաշույն են, որը կարելի է ուղղել Թուրքիայի, Իրանի և Իրաքի դեմ»[7]։

Ինչպես հայտնի է, Ստալինի հայկական նախագիծը տարբեր պատճառներով ձախողվեց։ Ինչ վերաբերում է Իրանական Ադրբեջանը Խորհրդային Ադրբեջանին միացնելու ծրագրին, ապա Ստալինը ինքն է հրաժարվել դրանից՝ հասկանալով, որ այդ դեպքում Խորհրդային Միության հարավային սահմանների երկայնքով կստեղծվի համատարած թուրքական գոտի։ Մեհաբադի քրդական հանրապետությունը նույնպես ունեցավ շատ կարճ կյանք՝ ընդամենը 11 ամիս[8]։ Ստալինը հավանաբար ընկրկել էր Արևմուտքի պետությունների ճնշման առջև։ Վարկած կա, որ ԱՄՆ-ը սպառնում էր Խորհրդային Միությանը միջուկային զենքով, եթե վերջինս չդադարեցներ իր «հարձակողական» քաղաքականությունը Մերձավոր և Միջին Արևելքում։

Սակայն ենթադրվում է, որ Ստալինը բնավ չէր հրաժարվել քրդական խաղաթուղթը օգտագործելու գաղափարից և սպասում էր Արևմուտքի հետ միջուկային հավասարակշռություն ստեղծվելուն։

---

[6] Տե՛ս **Eagleton W. Jr.** The Kurdish Republic of 1946. London, 1963:

[7] Տե՛ս **Берия С. Л.** Мой отец – Лаврентий Берия. М., 1994 // http://www.sakharov-center.ru/asfcd/auth/?t=book&num=1811

[8] Տե՛ս **Писян Н. К.** От окровавленного Мехабада до берегов Аракса (Пер. с персидского). Тегеран, 1943, ч. II:

Կասկածից վեր է, որ մեր օրերում քրդական հարցը բարդանում է նրանով, որ քրդերի բնակության տարածաշրջանում խաչաձևվում են համաշխարհային և տարածաշրջանային առաջատար պետությունների շահերը: Ըստ էության՝ Մերձավոր ու Միջին Արևելքի ոչ մի երկիր (թերևս բացի Իսրայելից) շահագրգռված չէ, որ ստեղծվի քրդական անկախ պետություն: Դրա պատճառները բազմաթիվ են: Նախ՝ պետական նոր կազմավորման ծնունդը հնարավոր է միայն Մերձավոր ու Միջին Արևելքի պետություններին պատկանող տարածքների վրա: Դժվար է հավատալ, որ այդ տարածաշրջանի որևէ պետություն համաձայնվի, որ իր տարածքը կրճատվի: Այնուհետև՝ քրդական պետության ստեղծումից հետո զինված կոնֆլիկտների շղթան լրջորեն կապակցությունացնի իրադրությունը տարածաշրջանում: Այս կամ այն չափով այդ կոնֆլիկտի մեջ կներքաշվեն տարածաշրջանի բոլոր պետությունները: Իսկ քանի որ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, կոնֆլիկտը կարող է վերածվել միջտարածաշրջանայինի: Դա սպառնալիքի տակ կդնի ներկայումս գործող և ապագայում կառուցվելիք նավթամուղներն ու գազամուղները: Նույնը վերաբերում է նաև եվրասիական տարանցիկ միջանցքին: Վերջապես՝ ոչ մեկին հայտնի չէ, թե ինչպիսին կլինի ստեղծվելիք քրդական պետության կողմնորոշումը, ընդգրկումը շատ մեծ է՝ ազատական աշխարհիկ երկրից մինչև իսլամական արմատականության հիմքի վրա աստվածապետական պետություն: Ուստի Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Սիրիայի կառավարող շրջանները մշտապես համատեղ ջանքեր են գործադրում քրդական ազգայնականությանը հակազդելու ուղղությամբ և այդ պետությունների ղեկավարները ժամանակ առ ժամանակ գաղտնի հանդիպումներ են ունենում քրդական հարցի կապակցությամբ իրենց գործողությունները համակարգելու նպատակով: Օրինակ, տվյալներ կան, որ Թուրքիայի և Իրանի միջև ձեռք է բերվել համաձայնություն իրենց սահմանամերձ շրջանների իրավիճակի վերաբերյալ հետախուզական տվյալներ փոխանակելու մասին[9]:

Քրդական հարցը լուծելու ուղղությամբ շահագրգռություն չեն դրսևորում նաև մեծ պետությունները: Այս բոլորը հիմք է տալիս եզրակացնելու, որ տեսանելի ապագայում քրդական պետության ստեղծումը հավանական չէ:

Մյուս կողմից իրողություն է, որ քրդական հարցը գնալով ենթարկվում է միջազգայնացման՝ վերածվելով ավելի ու ավելի լուրջ խնդրի ԱՄՆ-ի, Եվրամիության, Ռուսաստանի Դաշնության, Թուրքիայի, Իրանի, Իրաքի, Սիրիայի և այլ պետությունների հարաբերություններում:

Անկասկած, վերջին տարիներին Մերձավոր ու Միջին Արևելքում ծավալվող իրադարձությունների համատեքստում քրդերը վերածվել են տարածաշրջանային լուրջ խաղացողների: Նույնիսկ անվարան կա-

[9] Տե՛ս «Iraq and the Kurds: International Crisis Group (ICG)», report № 120, Middle East Institute, 19 April 2012:

բելի է ասել, որ ներկայումս նրանք մերձավորարևելյան քաղաքակա-նության մեջ հանգուցային դերակատարներ են։ Մյուս կողմից՝ «չկա չարիք առանց բարիքի» սկզբունքը հիանալի գործում է հօգուտ քրդերի։ Խոսքն այն մասին է, որ պետություն չունենալը մեծապես օգնում է նրանց գործելու գոյություն ունեցող իրավական հարաբերությունների համակարգից դուրս։ Այդ հանգամանքը, ինչպես նաև քրդերի մարտու-նակությունը, նրանց դարձնում է ժամանակակից Մերձավոր Արևելքի կարևորագույն խաղացողներից մեկը։

Հարց է ծագում. այսօր կարելի՞ է խոսել համաշխարհային քրդա-կան շարժման մասին որպես մեկ միասնական ամբողջություն։ Դժվար է սպառիչ պատասխան տալ այդ հարցին։ Սակայն մի բան ակնհայտ է, որ նույնիսկ մարտնչող քրդերի շրջանում խորացող հակասություններ-ին հակառակ՝ քրդական գաղափարախոսության մեջ տիրապետողը արդեն դարձել է անկախ պետականության ստեղծումը, որն անփոփոխ է մնում այդ բաժանված ժողովրդի բոլոր մասերի համար։

Միանգամայն ակնհայտ է, որ քրդական հարցի յուրահատկությու-նը պահանջում է լուծման ինչ-որ այլընտրանքային ճանապարհներ։ Դա պայմանավորված է նրանով, որ Մերձավոր ու Միջին Արևելքի և ոչ մի երկրում քրդական համայնքը միատարր չէ և չի հետապնդում ընդ-հանուր նպատակներ։ Ընդ որում՝ նրանց վարքագիծն ու գործելակեր-պը հաստատուն ուղղվածություն չունեն և պայմանավորված են պահի թելադրանքով։

XX դարը մեծ ողբերգություններ բերեց քրդերին։ 1980 թ. Սադդամ Հուսեյնը քիմիական զենքի օգնությամբ ոչնչացրեց տասնյակհազարա-վոր իրաքյան քրդերի։ Հալաբջա քաղաքում ընդամենը մեկ օրվա ըն-թացքում ոչնչացվեց հինգ հազար քուրդ, ևս 4500-ը կոտորվեց այսպես կոչված «Անֆալ» գործողության ընթացքում[10]։ Թուրքիայում 1988 թվա-կանից հետո թուրքական բանակի և Քրդական աշխատավորական կուսակցության (ՔԱԿ) (Partiya Karkeren Kurdistan-PKK) զինյալների միջև բախումների հետևանքով սպանվել է ավելի քան 40 հազար քուրդ, տասնյակհազարավոր մարդիկ բռնի տեղահանվել են իրենց բնակավայրերից[11]։ Սիրիայում մեծ թվով քրդերի զրկել են քաղաքա-ցիությունից, ստիպել են հրաժարվել իրենց ինքնությունից, արաբացրել են կամ ենթարկել էթնիկական զտման։ Իրանում քրդերի նկատմամբ կիրառվել են հալածանքներ։

Ներկայումս իրադրությունը Մերձավոր Արևելքում քրդական հարցի կապակցությամբ ունի հետևյալ պատկերը. Սիրիայում ընթա-ցող պատերազմը վերջին տասը տարիների ընթացքում նոր շունչ հա-ղորդեց քրդական ազգային շարժմանը Մերձավոր և Միջին Արևելքի

---

[10] Տե՛ս **David L. Phillips**. The Kurdish Spring. A new Map of the Middle East, New Brunswick, New Jersey, 2015, էջ 39։

[11] Տե՛ս նույն տեղը, էջ 57։

երկրներում (առաջին անգամ դա տեղի ունեցավ 2003 թ. ամերիկյան զորքերի կողմից Իրաք ներխուժելուց հետո)։ Սիրիայի քրդերի մեծ մասը պայքարում է Թուրքիայի կողմից աջակցություն ստացող իսլամական զինյալների դեմ։ Սիրիայի քրդական աշխարհազորային ջոկատները ակտիվ պայքար են մղում «Ջեբհադ ան Նուսրա» («Հաղթանակի ճակատ») իսլամիստական խմբավորումների ռազմական ստորաբաժանումների դեմ, որոնք մտնում են Սիրիայի այսպես կոչված Ազատ բանակի կազմի մեջ։ Սիրիայի Քրդական ազգային խորհուրդը, որը միավորում է 12 կուսակցությունների, անցյալ տարվա հունվարին դիմել է սիրիական Ազատ բանակի հրամանատարությանը՝ պահանջելով անհապաղ վերջ տալ «հանցավոր պատերազմին»։ Խորհրդի հայտարարության մեջ շեշտվում է, որ Ազատ բանակի կողմից կռվող վարձկանները Թուրքիայի ձեռքում դարձել են «հնազանդ գործիք», որ Անկարան այդ պատերազմում հետապնդում է սեփական շահերը։

Դամասկոսի հրաժարվելը սիրիական քրդերի տարածքների նկատմամբ կենտրոնացված հսկողությունից ոգևորիչ ազդակ էր նաև Թուրքիայում ապրող նրանց ցեղակիցների համար։

Ներկայումս Սիրիայի քրդերի տարբեր կազմակերպությունները միավորվել են, որպեսզի Իրաքյան Քրդստանի օրինակով ձեռք բերեն տարածաշրջանային ինքնավարություն։ Նրանք ԱՄՆ-ից ստանում են ռազմական օգնություն «Իսլամական պետության» զինյալների դեմ պայքարելու համար։ Մոսկվան ևս բազմիցս հայտարարել է, որ Սիրիայի քրդերի պայքարը ահաբեկիչների դեմ միանգամայն արդյունավետ ու օրինական է։

Իրաքյան Քրդստանում 1974 թ. հռչակված քրդական ինքնավարությունը աշխարհում միակ քրդական պետական կազմավորումն է։ Առայժմ դժվար է ասել, թե արդյոք այն կարող է դառնալ ապագա միացյալ քրդական պետության կորիզը, թե ոչ։ Համենայն դեպս մի բան ակնհայտ է, որ Իրաքում քրդական ինքնավարության գոյությունը կարող է վարակիչ օրինակ դառնալ Մերձավոր Արևելքի պետություններում ապրող քրդերի համար։

Ներկայումս իրաքյան քրդերի ազգային ձգտումները ԱՄՆ-ի կողմից պաշտպանություն են ստանում։ Թերևս հենց այդ պատճառով է քրդական ինքնավարության առաջնորդ Մասուդ Բարզանին այդ ինքնավարությունն անվանում «Մերձավոր Արևելքի ռազմավարական խրամատ»։ Սակայն միաժամանակ ցանկանալով պահպանել Իրաքի տարածքային ամբողջականությունը՝ Վաշինգտոնը դեմ է արտահայտվում քրդական անկախության նախագծերին՝ համարելով, որ դա անկայունության նոր օջախ կարող է դառնալ մերձավորարևելյան առանց այն էլ պայթյունավտանգ տարածաշրջանում։

Կարևոր է նշել, որ ԱՄՆ-ի դիրքորոշումը Մերձավոր ու Միջին Արևելքի տարբեր պետություններում բնակվող քրդերի նկատմամբ

միանգամայն տարբեր է: Եթե Իրաքում և Սիրիայում ԱՄՆ-ը և քրդերը սերտորեն համագործակցում են, ապա Թուրքիայում գործող Քրդական աշխատավորական կուսակցությունը Վաշինգտոնը որակում է ահաբեկչական կազմակերպություն: Այսպիսով, խիստ դժվար է ընդհանրական ձևով խոսել ԱՄՆ-ի քրդական քաղաքականության մասին, քանի որ ամերիկյան քաղաքագետները առանձնացնում են քրդերի երկու խումբ կամ տեսակ՝ «լավ քրդեր» և «վատ քրդեր»:

Վերջերս Վաշինգտոնի հետ միաժամանակ քրդական խաղաքարտը աշխատում է ավելի արդյունավետ օգտագործել նաև Մոսկվան, որը ոչ միայն ուշիուշով հետևում է քրդական զարգացումներին, այլև ջանում է ազդել դրանց վրա: Ռուսաստանի Դաշնությունը ձեռնամուխ է եղել նաև ակտիվ քայլերի Իրաքի քրդական ինքնավարության հարուստ էներգակիրների շահագործման բնագավառում: Բրիտանական «ԲՊ», ֆրանսիական «Տոտալ», ամերիկյան «Էքսոն Մոբիլ» և «Գալֆ Քեյսթոն պետրոլեում» նավթային ընկերությունների հետ միաժամանակ ակտիվորեն աշխատում է նաև ռուսական «Գազպրոմ նեֆթ Միդլ Իստ» ընկերությունը, որն Իրաքում մասնակցում է չորս նախագծերի իրագործմանը, որոնցից երեքը (Հալաբջա, Շաքալ և Գարմիյան) գտնվում են քրդական ինքնավար շրջանում:

Քրդական ինքնավարության զինված ստորաբաժանումները («Փեշմերգա»), որոնք գործում են Հյուսիսային Իրաքում, նույնպես ռազմատեխնիկական աջակցություն են ստանում Ռուսաստանի Դաշնությունից: Մոսկվան որոշակիորեն շահագրգռված է Իրաքի քրդական ինքնավար շրջանի կայուն զարգացման մեջ, քանի որ դա կարող է երաշխիք դառնալ ռուսական ներդրումների ապահովության: Ի դեպ, քրդական ինքնավար շրջանի կայունության և անվտանգության հարցերով մտահոգված են նաև ԱՄՆ-ը, Գերմանիան, Իսրայելը, Թուրքիան, Պարսից ծոցի միապետությունները և այլն, որոնք խոշոր ներդրումներ ունեն այնտեղ, ուստի զենք և սպառազինություն են տրամադրում Էրբիլի կառավարությանը:

Իրաքյան Քրդստանը գտնվում է նաև Թուրքիայի և Իրանի մշտական ուշադրության կենտրոնում, քանի որ նրանք այնտեղ ունեն տնտեսական, քաղաքական և ռազմավարական խոշոր շահեր: Անկարան, որը տևական ժամանակ հրաժարվում էր ճանաչել քրդական ինքնավարությունը, ներկայումս նրա թիվ առաջին տնտեսական գործընկերն է, իսկ երկրորդ տեղում Թեհրանն է:

2011 թ. ապրիլին Թուրքիայի վարչապետի կարգավիճակում առաջին անգամ Ռեջեփ Թայիփ Էրդողանը պաշտոնական այցով մեկնեց Էրբիլ: Բանակցությունների ժամանակ կողմերը արտահայտվեցին երկկողմ համագործակցությունը հատկապես էներգակիրների բնագավառում ընդլայնելու վերաբերյալ: Այդ այցի ժամանակ Թուրքիայի ֆինանսների նախարար Ա. Սիմսեքը քրդերեն արտասանած իր ճառում հատուկ շեշտեց քրդերի և թուրքերի «դարավոր բարեկամության» մա-

սին: Անկարայի պաշտոնական անձինք խոստացան ընդլայնել թուրքական ներդրումները՝ «ի շահ Իրաքի քրդական ինքնավարության»:

Կասկածից վեր է, որ Թուրքիայի ակտիվությունը անհանգստացնելու էր Իրանի Իսլամական Հանրապետությանը, քանի որ Անկարան Իրաքյան Քրդստանում հանդես է գալիս որպես իր մրցակից[12]: Առհասարակ Թուրքիան աշխատում է առավելագույնս արգելակել իրանական ազդեցությունն Իրաքում, այդ թվում այդ երկրի սուննի բնակչությանը աջակցելու միջոցով: Մինչդեռ Իրանը, որը հանդես է գալիս Իրաքի շիաների պաշտպանության դիրքերից, ամեն կերպ աշխատում է խոչընդոտել սուննի բնակչության ուժեղացումը, այդ թվում նաև Իրաքի իշխանական կառույցներում:

Առհասարակ Իրաքյան Քրդստանն ունի նավթի և գազի հարուստ պաշարներ, որոնք դուռ են բացել տարբեր պետությունների մրցակցության համար: Քրդական ինքնավար կազմավորումից Թուրքիա է գնում մի նավթամուղ՝ օրական մեկ միլիոն բարել թողունակությամբ:

Իրաքյան Քրդստանի ինքնավարությունը, որի պաշտոնական անվանումն է՝ «Քրդական տարածաշրջանային կառավարություն», ներկայումս օրական արդյունահանում է 200 հազար բարել նավթ: Սակայն պետք է նշել, որ Իրաքյան Քրդստանը ելքեր չունի դեպի ծով, ուստի և որոշակի դժվարությունների առջև է կանգնած իր էներգակիրների արտահանման հարցում:

Թուրքիան Իրաքի հյուսիսում շարունակում է պահպանել իր ռազմական ներկայությունը, որի խնդիրն է լեռնային շրջաններում տեղակայված ՔԱԿ-ի գրոհայիններին զսպելը: Անկարան աշխատում է թուրք-իրաքյան սահմանային գոտում՝ Քանդիլի լեռներում բազավորված ՔԱԿ-ի զինյալների դեմ պայքարում ձեռք բերել Իրաքյան Քրդստանի աջակցությունը:

Այս համատեքստում պատահական չէ, որ Իրաքյան Քրդստանի կառավարող վերնախավի շատ ներկայացուցիչներ, այդ թվում նաև քրդական ինքնավարության ղեկավար Մասուդ Բարզանիի եղբորորդին՝ Նեչիրվան Բարզանին, որը զբաղեցնում է քրդական տարածաշրջանային կառավարության վարչապետի պաշտոնը, կողմնորոշվում են դեպի Թուրքիան:

Թուրքիան և Իրանն անկասկած ռազմավարական առաջնահերթ խնդիր են համարում Իրաքի քրդական ինքնավարության անկախությունը կասեցնելը: Այդ երկու պետությունները անվերապահորեն համերաշխ են այն հարցում, որ Իրաքյան Քրդստանը իրաքյան դաշնության անդամի կարգավիճակից չվերածվի անկախ պետական կազմավորման: Միաժամանակ Իրանի Իսլամական Հանրապետությունը և Թուրքիան ամեն գնով աշխատում են մեկուսացնել Իրաքյան Քրդստանը, որպեսզի այն շփումներ չունենա իրենց երկրների քաղաքական ընդդիմության հետ:

---

[12] Տե՛ս «Turkey and Iran Vie for control of Iraq» // http://www.peyamner.com/details.aspx?l=4&id=238922

Ներկայումս Իրաքյան Քրդստանում ներքին քաղաքական գործընթացներին բնորոշ է երկրի ղեկավարությունը իրենց ձեռքերում կենտրոնացրած երկու հզոր կլանների սուր հակամարտությունը, որը ժամանակ առ ժամանակ վերածվում է նույնիսկ զինված բախումների։ Դրանցից մեկի առաջնորդը Քրդստանի ժողովրդավարական կուսակցության (ՔԺԿ) առաջնորդ և ինքնավար Քրդստանի ղեկավար Մասուդ Բարզանին է, իսկ մյուսը՝ Քրդստանի հայրենասիրական միության առաջնորդ (ՔՀՄ) Ջելյալ Թալաբանին, որը զբաղեցնում էր Իրաքի Հանրապետության նախագահի պաշտոնը։ Վերջինս Բարզանիի կլանը և նրա կուսակցությունն անվանում է «ցեղային ֆեոդալներ», իսկ իրեն հայտարարում է «քրդական սոցիալ-դեմոկրատների» առաջնորդ։ Նրանց մրցակցության կարևորագույն պատճառներից մեկը նավթի վաճառքից, մաքսատներից և այլ աղբյուրներից ստացվող հսկայական եկամուտների բաժանման հարցն է, ինչպես նաև առհասարակ պետության ռեսուրսների մենաշնորհումը։

Թեև ԱՄՆ միջնորդությամբ կողմերի միջև 1998 թ. կնքվել է զինադադարի համաձայնագիր, սակայն առ այսօր նրանց առճակատումը մերթ սքողված ձևով, մերթ բացահայտ շարունակվում է։ Իրաքյան Քրդստանում ծնունդ առած նոր քաղաքական կուսակցությունները և խմբավորումները («Գորրան», Քրդստանի իսլամական միություն, Քրդստանի իսլամական խմբավորում և այլն) էլ ավելի են բարդացնում այդ երկրամասի ներքին քաղաքական իրավիճակը։ Սակայն Վաշինգտոնն աշխատում է թույլ չտալ, որ Իրաքյան Քրդստանում ստեղծվի քառասային վիճակ, կամ, ինչպես ամերիկացիներն են արտահայտվում, այն չվերածվի «Մերձավորարևելյան Կոսովոյի»։

Իրաքյան Քրդստանում գործող բոլոր քաղաքական կուսակցությունների և խմբավորումների տեսակետը ինքնավարությունը լիակատար անկախության վերածելու վերաբերյալ միահամուռ է։ Այդ հարցի կապակցությամբ նրանք բոլորը պահանջում են հանրաքվե։

Քրդական հարցը չափազանց մտահոգում է նաև Իրանին Իրանական Քրդստանում և Իրանական Ադրբեջանում, ինչպես նաև երկրի տարբեր շրջաններում համախումբ կամ ցրված ապրում են մի քանի միլիոն քրդեր։ 1979 թ. Իսլամական հեղափոխությունից հետո այդ երկրում ստեղծված կրոնական-աստվածապետական վարչակարգը որդեգրել էր իսլամի հիմքի վրա միատարր (ունիտար) պետություն ստեղծելու սկզբունքը։ Ունիտարիզմը՝ խարսխված թուրքական, իրանական կամ արաբական ազգայնականությանը, ժխտում ու չի ընդունում երկրի որևէ փոքրամասնության ինքնավարության կամ ինքնիշխանության ցանկացած ձև։

Քրդերը «Իսլամական պետության» ստեղծման օրվանից մշտապես գլխացավանք են դարձել կառավարության համար։ Առհասարակ նրանք մի տարր են, որոնց չափազանց դժվար է հնազանդեցնել։ Բացի

այլևայլ հանգամանքներից, Թեհրանը նաև մտավախություն ունի, որ քրդական գործոնը կարող է գործողության մեջ դրվել իր պոտենցիալ հակառակորդների կողմից։

Ճիշտ է, Իրանում քրդերն առայժմ զինված ելույթներ չեն ունենում, սակայն նրանց սովորաբար համեմատում են անթեղված կրակի հետ, որը ամեն վայրկյան կարող է բռնկել։

Ներկայումս մերձավորարևելյան թոհուբոհի մեջ Թեհրանը կարողանում է հաջողությամբ օգտագործել քրդական խաղաթուղթը։ Սակայն, դրանով հանդերձ, քրդական հարցը շարունակում է մնալ այդ պետության ներքին կյանքի և արտաքին հարաբերությունների առաջնակարգ կարևորության խնդիրներից մեկը։

Իրանի Իսլամական Հանրապետության գործող սահմանադրության համաձայն՝ այդ երկրում արգելված է քաղաքական կուսակցությունների գործունեությունը։ Ուստի իրանական քրդերի ակտիվ քաղաքական կուսակցությունների մեծ մասը վտարանդության մեջ է։ Հայրենիք վերադառնալու հարցի կապակցությամբ նրանց և Թեհրանի միջև բանակցությունների բազմաթիվ փորձերը ավարտվել են անհաջողությամբ, քանի որ քրդերը նախապայման են առաջադրում, որ կվերադառնան հայրենիք միայն այն դեպքում, եթե ճանաչվեն քրդերի իրավունքները, և դրանք ստանան պետության աջակցությունը[13]։

Ինչ վերաբերում է Թուրքիայի քրդերին, ապա նրանք արդեն տասնյակ տարիներ շարունակ ապստամբական ելույթներ են ունենում իշխանությունների դեմ և մշտական պայքար մղում՝ հանուն իրենց ազգային իրավունքների։ 1984 թվականից սկսած՝ Աբդուլլա Օջալանի Քրդստանի աշխատավորական կուսակցությունը (ՔԱԿ), որը ձևավորվել է 1978 թ., բացահայտ զինված պայքար է մղում կառավարության դեմ՝ նպատակ ունենալով Թուրքիայի հարավարևելյան և Իրաքի հյուսիսարևմտյան մասերում ստեղծել քրդական պետություն։ Այդ կուսակցությունը առաջ է քաշում քրդական պետության ստեղծման «դաշնային» սկզբունքը, որը ենթադրում է թուրք-քրդական, իրանա-քրդական և սիրիա-քրդական դաշնության ստեղծումը[14]։ Դա նշանակում է քրդական պետության ստեղծման պահանջ այսպես կոչված «էթնիկական Քրդստանի» շրջանակներում, ինչն իհարկե չի կարող ընդունելի լինել Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Սիրիայի համար։ 1997 թ.՝ դեռևս մինչև իր բանտարկվելը, Լոնդոնի հետ հեռուստակամրջի ժամանակ ելույթ ունենալով, Օջալանը հայտարարեց, որ քրդական հարցը լուծելիս կարելի է օգտագործել Հյուսիսային Իռլանդիայի փորձը։

Մինչև 1998 թ. ՔԱԿ-ը Սիրիայում ուներ ռազմական խոշոր հենակետ, որտեղ մարզվում էին նրա զինյալները։

Ներկայումս ոչ միայն քրդական պետականություն ստեղծելու

---

[13] Տե՛ս http://www.odnako.org/magazine/material/poteryanniy-Kurdistan

[14] Տե՛ս **Мурадян И.** Проблемы безопасности в ближневосточной политике США. Ер., 2003, էջ 125։

հարցում, այլև պայքարի մարտավարության խնդրում քրդերի քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների միջև միասնություն և ընդհանուր տեսակետ գոյություն չունի: Քրդական հասարակայնության մի ստվար մասը պահանջում է սահմանադրորեն ճանաչել Թուրքիայի քրդերի էթնիկ, մշակութային և լեզվական իրավունքները, քրդերին շնորհել ինքնավարություն, որը ներառի այնպիսի բաղկացուցիչներ, ինչպիսիք են Թուրքիայի վարչական համակարգի ապակենտրոնացումը և տեղական ինքնակառավարման մարմիններին լայն լիազորությունների տրամադրումը[15]: Մեկ այլ խումբ պահանջում է Թուրքիայից անջատում և լիակատար անկախություն և այլն: Քրդերի քաղաքական ապագայի վերաբերյալ տարբեր տեսակետներ ունեցող կուսակցությունների և խմբավորումների միջև դիմակայությունն ու առճակատումը ժամանակ առ ժամանակ վերածվում են եղբայրասպան զինված բախումների: Հենց դրանում է քրդական շարժման թուլությունը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում ՔԱԿ-ի ներկա ղեկավարությունը՝ դժվար է ասել: Աբդուլլա Օջալանը, որն իր քաղաքական գործունեության սկզբնական շրջանում մաոյական-կաստրոյական տիպի մարքսիստ էր, հետագայում քրդական մտավորականությանը իր կողմը գրավելու նպատակով հրաժարվեց դրանից, դավանելով սոցիալիստական-ազգայնական գաղափարներ: Ներկայումս նա Մարմարա ծովի Իմրալի կղզու բանտում դատապարտված է ցմահ ազատազրկման: Նրա բացակայության ընթացքում կուսակցության գործունեությունը հիմնականում ղեկավարում են Օջալանի զինակիցներ Զուբեյր Այդարը, Մուրադ Քարայլանը և Ջեմիլ Բայըքը[16]:

Ա. Օջալանի քաղաքական հայացքները աչքի չեն ընկնում կայունությամբ: Դրանք հեղհեղուկ են և իրարամերժ: Դեռևս 2011 թ. նա հայտարարեց, որ ինքը առժամանակ դադարեցնում է ՔԱԿ-ի զինված պայքարը թուրքական իշխանությունների դեմ: Դրանից ելնելով թուրքական կառավարությունը փոխեց իր քաղաքականությունը ՔԱԿ-ի նկատմամբ: Բանտում նրան այցելեց թուրքական պատվիրակությունը, որի հետ Օջալանը իբր եկել էր որոշակի համաձայնության և կնքել ինչոր համաձայնագիր քրդական հարցի վերաբերյալ[17]: Սակայն Ափոյի (այդպես են քրդերն անվանում իրենց առաջնորդին) շփումները Էրդողանի կառավարության հետ դեռևս ոչ մի բան չի նշանակում: Ավելին, ՔԱԿ-ի գործիչները Թուրքիայի ղեկավարության նմանատիպ քայլերը գնահատում են որպես Ա. Օջալանին էլ ավելի մեկուսացնելու փորձ:

Առհասարակ, քրդական քաղաքական շարժման առաջնորդը հաճախ է փոխում իր տեսակետները, իսկ նրա կուսակցության ծրագրա-

---

[15] Տե՛ս Meliha Benli Altunishik, The possibilities and limits of Turkey's soft power in the Middle East, Insight Turkey, vol. 10(№ 2), 2008, էջ 32-35:

[16] Տե՛ս www.mfa.tr.PKK/KONGRA-Gel

[17] Տե՛ս Ocalan and Turkish Government Reach a Deal // http://www.peyamner.com/ details.aspx?1=48&id=239734

յին փաստաթղթերում բացակայում է իրապաշտությունը, իսկ երբեմն նաև պատմական իրողության հետ հաշվի նստելու հանգամանքը: ՔԱԿ-ը հավակնություն ունի ազգային քաղաքական գործերում միանձնյա ղեկավարության: Ուստի քրդական բոլոր մնացած կուսակցություններին ու կազմակերպություններին հայտարարեց համաձայնողական, օպորտունիստական, իսկ երբեմն նույնիսկ քուրդ ժողովրդի ազգային իդեալը ոտնահարող ու մերժող, որոնց դեմ անհրաժեշտ է մղել անզիջում պայքար: Նման մարտավարությունը, երբ ՔԱԿ-ը քրդական շարժման մեջ ձեռք է բերել համարյա մենաշնորհային դիրքեր, էապես թուլացնում է այդ շարժումը:

ՔԱԿ-ը ծրագրային փաստաթղթերում իրեն հայտարարում է տարածաշրջանի բոլոր ժողովուրդների ազատության գաղափարի ջատագով: Սակայն դրանցում ոչ մի տեղ հիշատակություն չկա Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների վերաբերյալ կամ այդ գործին քրդերի կողմից թեկուզ որևէ կերպ նպաստելու մասին: Ընդհակառակը, Արևմտյան Հայաստանի տարածքներն ընդգրկված են ՔԱԿ-ի քաղաքական պահանջները ներառող այսպես կոչված «Քրդստանի» աշխարհագրական սահմանների մեջ: Առհասարակ հայտնի չէ քրդական որևէ կուսակցություն կամ լուրջ կազմակերպություն, որն այդ հարցում ունենա այլ տեսակետ: Ինչ վերաբերում է բոլոր տեսակի և գույնի քուրդ ազգայնականներին, ապա նրանք բոլորն անխտիր Արևմտյան Հայաստանն անվանում են Քրդստան: Նրանք Արևմտյան Հայաստանի տարածքում ապրող քուրդ բնակչությանն անվանում են տեղաբնիկ (ավտոխտոն), որ իբր քրդերը անհիշելի ժամանակներից ապրում են իրենց «պապենական հողերում»:

Ներկայումս տարբեր երկրներում ապրող քուրդ ազգայնականները տարբեր լեզուներով և մեծ տպաքանակով հրատարակում ու ամբողջ աշխարհով մեկ ցրում են գրքեր, քարտեզներ, զանազան բուկլետներ և այլն, որոնցում Արևմտյան Հայաստանը անվանվում է Քրդստան կամ Արևմտյան Քրդստան:

Միանգամայն ակնհայտ է, որ դեռևս օսմանյան շրջանից թուրքական կառավարող շրջանները հետևողական աշխատանք են տարել, որ քրդերը Արևմտյան Հայաստանն ընկալեն որպես իրենց վաթան-հայրենիք: Դժբախտաբար պետք է խոստովանել, որ դրանում նրանք հասել են հաջողության: Արդեն վաղուց Թուրքիայի քրդական զանգվածների մեջ ամրակայվել է այն թյուր տեսակետը, որ իբր Արևմտյան Հայաստանը Քրդստան է:

Ներկայումս Թուրքիայում շատերը այն տեսակետին են, որ քրդական հարցը երկրի թիվ մեկ խնդիրն է: Սակայն թուրքական կառավարող շրջանների ընդհանուր կարծիքն այն է, որ քրդական հարցը պետք է լուծվի երկրի միասնության շրջանակներում: Միևնույն ժամանակ, Թուրքիայում քուրդ ժողովրդի քաղաքական ապագայի վերաբերյալ

տեսակետները խիստ բազմազան են։ Ոմանք գտնում են, որ քրդական հարցը պետք է լուծվի բացառապես ռազմական ճանապարհով, մյուսները կարծում են, որ այդ հարցը ռազմական լուծում չունի, քանի որ ուժի դիմելու բոլոր փորձերը ցանկալի արդյունքներ չեն տվել։ Առկա է նաև քրդական հարցը տնտեսական մեթոդներով լուծելու տարբերակը, այսինքն՝ քրդերը ինքնավարություն կամ սեփական պետություն ստեղծելու պահանջ չեն դնի, եթե երկրի քրդաբնակ շրջանները տնտեսապես զարգանան և բնակչության վիճակը բարելավվի։ Այդ դեպքում նրանք չեն աջակցի նաև քրդական զինված խմբավորումներին։

Ներկայումս Թուրքիան իրեն հայտարարում է տարածաշրջանային գերտերություն։ Ըստ այնմ՝ թուրք քաղաքական գործիչները մշտապես հայտարարում են, թե որքան որ արտաքին ուժերը (նկատի ունեն առաջին հերթին ԱՄՆ-ին և Իսրայել-ին) ուժեղացնեն իրենց ճնշումը Անկարայի վրա քրդական հարցի կապակցությամբ, այնքան նա ավելի ու ավելի շատ կդառնա անզիջող։

Կասկածից վեր է, սակայն, որ Թուրքիայի համար կենսական խնդիր է քրդական հարցի այս կամ այն ձևով հնարավորինս արագ լուծումը, քանի որ թուրքական կառավարող շրջանները գտնում են, որ դա ոչ միայն սպառնալիք է պետության անվտանգությանը այն ապակայունացնելու իմաստով, այլև կարող է հանգեցնել Թուրքիայի փլուզմանը և երկրի տարածքի հսկայական մասի կորստին։ Ընդ որում՝ Թուրքիան սպառնալիք է համարում ոչ միայն իր երկրում, այլև հարևան պետություններում ապրող քրդերին։ Ուստի Անկարան կենսականորեն շահագրգռված է զսպել քրդական նացիոնալիզմը ոչ միայն իր տարածքում, այլև Իրաքում, Սիրիայում և Իրանում։ Նա առհասարակ աշխատում է խոչընդոտել որևէ տեսակի քրդական անկախ կամ ինքնավար տարածքային կազմավորման ստեղծումը։

Իր վարքագծով ու գործելակերպով Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ցույց է տալիս, որ ինքը հին թուրքական նացիոնալիզմի ուժեղ ազդեցության տակ է գտնվում։ Հենց այդ պատճառով Թուրքիայի քրդական քաղաքականությունը և առհասարակ արտաքին քաղաքականության կողմնորոշիչները խարսխված են նեոօսմանիզմի գաղափարախոսության վրա[18]։ Էրդողանի կառավարությունը մի կողմից ջանում է թույլ չտալ էթնիկական Քրդստանում քրդական նացիոնալիզմի վերելք, սակայն մյուս կողմից աշխատում է մեղմացնել իր հարաբերությունները ՔԱԿ-ի և առհասարակ քրդական ընդդիմության հետ։

Պետք է խոստովանել, որ ներկայումս թուրքական բանակը և հատուկ ծառայությունները մեծ հմտություն են ձեռք բերել քրդական

---

[18] Տե՛ս **Ahmet Davutoghlu**. Stratejik derinlik: Turkiye'nin uluslararasi konum, Kure yayinlari. Istanbul, 2001, **Жигалина О. И.** Этнический Курдистан как перекресток геополитических и экономических интересов // https://cyberleninka.ru/ article/v/etnicheskiy-kurdistan-kak-perekrestok-geopoliticheskih-i-ekonomicheskih-interesov

շարժման դեմ պայքարելու և այն ջլատելու հարցում: Ստեղծվել են բանակային հատուկ ստորաբաժանումներ, որոնք մարզված են լեռնային պարտիզանների դեմ պայքարելու համար: Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը ընդունել է մի փաստաթուղթ՝ «Թուրքիայի հակաահաբեկչական ռազմավարություն» անունով, որը ներառում է նաև պայքարը «քրդական ահաբեկչության» դեմ[19]: Անկարան եռանդուն աշխատում է նաև իր գլխավոր հակառակորդի՝ ՔԱԿ-ի սոցիալական հենարանը խարխլելու ուղղությամբ: Այդ նպատակով ստեղծվել են քրդական «գրպանային կուսակցություններ», մի բան, որը Թուրքիայի քաղաքական պրակտիկայում նորություն չէ: Ներկայումս թուրքական խորհրդարանում որպես Թուրքիայի քրդերի միակ ներկայացուցիչ հանդես է գալիս «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցությունը: Դեռևս 1980-ական թվականների կեսերին թուրքական կառավարության նախաձեռնությամբ ստեղծվել էին այսպես կոչված «գյուղական պահապանների» զինված ջոկատներ, որոնք բաղկացած էին բացառապես քրդերից: Դրանց խնդիրն էր պայքարել «քրդերի կողմից քրդերի դեմ»:

Թուրքական քաղաքականության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այդ երկրում գոյություն ունեն ուժային ընդհատակյա կենտրոններ, որոնք էապես ազդում են երկրում իրականացվող ներքին և արտաքին քաղաքականության վրա: Այդ կիսառազմական ազդեցիկ կազմակերպությունները սերտորեն համագործակցում են կառավարության հետ քրդական շարժումը ջլատելու համար:

1923 թ. Լոզանի պայմանագրի համաձայն՝ Թուրքիայի ազգային փոքրամասնություններ են համարվում ոչ մահմեդական համայնքները, որոնք բաղկացած են հրեական, հունական և հայկական ծագմամբ Թուրքիայի քաղաքացիներից: Թուրքական օրենսդրությամբ քրդերը չեն ճանաչվում որպես ազգային փոքրամասնություն, այլ դիտվում են որպես միասնական իսլամական համայնքի՝ ումմայի անդամ: Հետևաբար՝ Թուրքիայի հարավարևելյան շրջաններում տիրող վիճակը թուրքական կառավարությունը չի մեկնաբանում ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցի տեսանկյունից:

Անկարայի այդ դիրքորոշմանը Եվրամիության ներկայացուցիչները համաձայն չեն: Ավելին, նրանք գտնում են, որ քրդական հարցը պետք է դիտել մարդու իրավունքների և ազատությունների տեսանկյունից: Ի դեպ, եվրոպացիները մտավախություն ունեն, որ Թուրքիայի՝ Եվրամիության մեջ ընդգրկվելու դեպքում քրդական էթնիկական կոշտ հակամարտությունը կտեղափոխվի եվրոպական տարածք: Ավելորդ չէ նշել նաև, որ 2004 թվականից սկսած՝ Եվրամիությունը ՔԱԿ-ը մտցրել է ահաբեկչական կազմակերպությունների ցուցակի մեջ՝ դրանից բխող

[19] Տե՛ս Թուրքիայի վարչապետի պաշտոնական կայք՝ http://www.basbakanlik.gov.tr

բոլոր հետևանքներով: ԱՄՆ-ը ևս ՔԱԿ-ը դասում է ահաբեկչական կազմակերպությունների թվին:

Պետք է նկատի ունենալ ներկա ժամանակների համար մի կարևոր իրողություն. դա այն է, որ քրդերը հանդես են գալիս որպես ԱՄՆ-ի դաշնակիցներ: ԱՄՆ-ի ռազմավարական և անվտանգության գերակա շահերը պահանջում են քրդերին մշտապես պահել իրենց մերձավորարևելյան քաղաքականության առաջին դիրքերում: Վաշինգտոնը հավանաբար մտադիր է բանականության սահմաններում թեժացնել քրդերի ձգտումը՝ ձեռք բերելու ազգային ինքնիշխանություն, սակայն թույլ չտալով, որ նրանք անցնեն թույլատրելի սահմանները: ԱՄՆ-ի ներկայությունը տարածաշրջանում անկասկած ապահովում է ուժերի հավասարակշռությունը և խանգարում տարածաշրջանային այնպիսի խաղացողների հավակնությունների իրականացմանը, ինչպիսիք են Թուրքիան և Իրանը:

Թուրքիայի քրդաբնակ շրջանները թուրքական պետությունից անջատելու ենթադրական հնարավորությունը ստիպում է Անկարային քրդական հարցում վարել «մտրակի և կարկանդակի» քաղաքականություն: Նա մի կողմից վարում է կոշտ, այդ թվում նաև ռազմական ուժ օգտագործելու քաղաքականություն, իսկ մյուս կողմից դիմում է Թուրքիայի քաղաքական ավանդույթին ոչ բնորոշ որոշ զիջումների՝ նպատակ ունենալով ինչ-որ չափով համահարթել կենտրոնի և երկրի հարավ-արևելքի միջև եղած հակասություններն ու առճակատումը: Ժամանակ առ ժամանակ Թուրքիան փորձում է տպավորություն ստեղծել, որ իբր սկսել է ըմբռնումով մոտենալ քրդական հիմնախնդրին: Դրանով նա ցանկանում է դրսի աշխարհի վրա թողնել ժողովրդավար պետության տպավորություն: Ի դեպ, տարբեր երկրների իրավապաշտպան կազմակերպությունների գործունեությունը սահմանափակում է Թուրքիայի հնարավորությունները՝ քրդերի նկատմամբ գործելու այդ երկրին բնորոշ ավանդական մեթոդներով:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին. Մերձավոր Արևելքում քրդական հարցի կարգավորման նախադրյալ առայժմ չի նկատվում, թեև ԱՄՆ-ում և Եվրոպայում հաճախ են խոսում այն մասին, որ ժամանակն է քանդելու «քրդական հանգույցը»: Այդ հարցում քրդերը մեծ հույսեր են կապում ԱՄՆ-ի աջակցության հետ:

Անշուշտ, Թուրքիայի քուրդ բնակչության մի զգալի հատվածը հանդես է գալիս սեփական պետություն ստեղծելու հարցադրումով, մեկ այլ հատված կողմնակից է Թուրքիայի կազմում ինքնավարության, որը ենթադրում է քրդաբնակ տարածքների ապակենտրոնացում և իշխանությունը քրդերին հանձնելու տարբերակ: Թուրքիայում քրդական հարցի խորքային ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ ներկայումս այդ երկրում փոքր թիվ չեն կազմում քրդական այն հավաքականությունները, որոնք կողմնակից են ոչ թե անջատվե-

լու թուրքական պետությունից, այլ պահանջում են քրդական հիմնախնդրի լուծում Թուրքիայի կազմում: Նման կողմնորոշման տեր մարդիկ որպես կանոն ենթադրում են, որ մեծ երկիրը, որը ելքեր ունի դեպի Եվրոպա և առհասարակ դեպի արտաքին աշխարհ, քրդական հիմնախնդրի լուծման դեպքում իրենց կտրամադրի ավելի մեծ հնարավորություններ, քան աշխարհագրականորեն մեկուսացված և որպես հարևան թշնամական Թուրքիա ունեցող անկախ Քրդստանը:

Անշուշտ, Թուրքիայում քիչ չէ նաև այն քրդերի թիվը, որոնց մեջ հաստատապես ամրակայվել է այն գիտակցությունը, որ թուրքական կառավարության հակաքրդական քաղաքականությանը չդիմադրելու դեպքում քրդերը ի վերջո դատապարտված են կրելու հայերի ճակատագիրը:

Ներկայումս Մերձավոր ու Միջին Արևելքում և առհասարակ աշխարհում տեղի ունեցող զարգացումների ընթացքը հանգեցնում է այն համոզման, որ 21-րդ դարում աշխարհը կարող է փոխվել անճանաչելիության աստիճան: Հետևաբար չի բացառվում, որ այսօր անլուծելի թվացող մի շարք խնդիրներ տեսանելի ապագայում գտնեն այնպիսի տարբերակով լուծումներ, որոնք ներկա պահին դժվար է պատկերացնել:

Բանալի բառեր – *քրդական հարց, Քրդստան, քրդական աշխարհ, Թուրքիա, Իրան, Իրաք, Սիրիա*

ВААН БАЙБУРТЯН – ***Современное состояние и перспективы развития Курдского вопроса.*** – В статье рассматривается курдская проблема в рамках так называемого этнического Курдистана, который охватывает населённые курдами территории Турции, Ирана, Ирака и Сирии. Отмечается, что курды являются сегодня самой большой этнической группой на Ближнем и Среднем Востоке, не имеющей собственного государства. Война в Сирии вдохнула жизнь в курдское национальное движение. Анализируется деятельность курдских политических партий и организаций, перспектива развития курдского вопроса, а также отношение к нему США и стран Евросоюза. Подчёркивается, что в настоящее время курды – ключевой фактор ближневосточной политики.

Ключевые слова: *курдский вопрос, Курдистан, курдский мир, Турция, Иран, Ирак, Сирия*

VAHAN BAIBOURTIAN – ***The Current State and Prospects for Development of the Kurdish Issue.*** – The article deliberates on the Kurdish issue within so-called ethnic Kurdistan including relevant territories in Turkey, Iran, Iraq and Syria. It is emphasized that Kurds are currently the biggest ethnic group in the Middle and Central East lacking statehood. The idea is highlighted that the war now in progress in Syria has brought fresh blood into the national Kurdish movement. The article analyzes the activities of Kurdish political parties and organizations; the perspectives of the Kurdish issue; as well as the policy of the USA and the European Union towards this complex and intricate question. It is noteworthy that Kurds are currently one of the key factors in the politics of the Middle and Central East.

Key words: *Kurdish issue, Kurdistan, Kurdish world, Turkey, Iran, Iraq, Syria*